ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

№ 5/07. 1/2254
«_____» «_____»2019թ .

«Ինֆորմացիայի ազատության կենտրոնի »
նախագահ տիկին Ծ.Դոյդոյանին

Հարգելի տիկին Դոյդոյան

Ի պատասխան Ձեր 2019թ.դեկտեմբերի 2-ի N 343-83 գրության հայտնում եմ ,որ համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի (այսուհետ՝ օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի՝ հանրային քննարկումն իրավաստեղծ գործընթացին հասարակության մասնակցության , **գործընթացի թափանցիկության և հաշվետվողականության ապահովման նպատակով** նորմատիվ իրավական ակտի նախագծի վերաբերյալ հանրության իրազեկման , ինչպես նաև հանրային կարծիքը բացահայտելու , դրա վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ ստանալու և դրանք ամփոփելու գործընթաց է: Միաժամանակ օրենքի 3-րդ հոդվածով սահմանված է պահանջ այն մասին , որ օրենսդրական ակտերի նախագծերը ենթակա են հանրային քննարկման ,իսկ 4-րդ հոդվածի 5-րդ մասով՝ հանրային քննարկման ենթակա , հանրային քննարկում չանցած Կառավարությունն ներկայացված նախագիծը Կառավարությունը կարող է վերադարձնել այն ներկայացնող մարմին :

Բացի օրենքով սահմանված վերոնշյալ դրույթներից՝ Կառավարության 2018 թվականի հոկտեմբերի 10-ի N 1146-Ն որոշմամբ սահմանվել է հանրային քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը ,որում ամրագրված է,որ հանրային քննարկումներն իրականացվում են հրապարակայնության , մատչելիության , թափանցիկության և հանրային հաշվետվողականության սկզբունքների հիման վրա և Կառավարության 2018 թվականի հունիսի 8-ի N667-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 16-րդ կետով սահմանված է Կառավարության քննարկման համար վարչապետի աշխատակազմ ներկայացվող իրավական ակտերի նախագծերի փաթեթում հանրային

0010, ք.Երևան ,Հանրապետության հր.,
Կառավարական տուն 3
10010608@e-citizen.am | minenv@env.am | www.env.am
հեռ .+374 11 818520 | ֆաքս՝ +37411 818506

քննարկումների արդյունքում ստացված դիտողությունների ու առաջարկությունների, դրանց ընդունման կամ չընդունման վերաբերյալ՝ չընդունման պատճառների հիմնավորմամբ, իսկ դիտողություններ և առաջարկություններ ստացված չլինելու դեպքում՝ դրա մասին տեղեկանքը ներառելու պահանջը:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով, որ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը տեղադրված է արդարադատության նախարարության կողմից վարվող իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում և հանրային քննարկման համար սահմանված է ժամկետ՝ ներառյալ մինչև 2019 թվականի դեկտեմբերի 17-ը, հետևապես հայտարարությամբ ներկայացված դժգոհությունները և նախագիծը շրջանառությունից հանելու առաջարկն անհիմն են, քանի որ շրջակա միջավայրի նախարարությունն ապահովել է հանրային քննարկման հետ կապված ՀՀ օրենսդրությամբ ամրագրված բոլոր պահանջները, իսկ շահագրգիռ հանրությունը նախագծի վերաբերյալ իր առաջարկությունները կամ առարկությունները կարող է ներկայացնել կայքում:

Միաժամանակ նշեմ, որ նախագծի մշակման հանձնարարականն ընդգրկված է Կառավարության 2019 թվականի մայիսի 16-ի 650-Լ որոշմամբ հաստատված Կառավարության 2019-2023 թվականների գործունեության ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների ցանկի 102.3-րդ ենթակետում:

Հարգանքով՝
պաշտոնակատար Վ.Ջիլավյան

12/10/2019

X

ՎԱՀԵ ՋԻԼԱՎՅԱՆ

Signed by: JILAVYAN VAHE 4101750076

ՏՀՀԿՎ
Ա.Սուքիասյան
011-818-559